ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԱԿ-5/37
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան

29 .01.2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, (այսուհետ՝ կենտրոն), ի դեմս կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Ա. Պողոսյանի, որը գործում է կենտրոնի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01 «37.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կենտրոնին հատկացնել մինչև 70265600 (Յոթանասուն միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կենտրոնը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կենտրոնի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կենտրոնից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կենտրոնը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կենտրոնը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կենտրոնի կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կենտրոնն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կենտրոնին.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կենտրոնին:

2.4. Կենտրոնը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կենտրոնի կատարողական հաշվետվությունները,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կենտրոնին կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կենտրոնը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կենտրոնին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կենտրոնին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նրանցում իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, ներքին մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3 շենք

ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն

Հ/Հ 900011011732

ՀՎՀՀ 02512868

Գլխավոր քարտուղար

_____ Ն. Հարությունյան

/ ստորագրություն / Կ.Տ

ԿԵՆՏՐՈՆ

«Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն»

ՊՈԱԿ

Ք. Սպիտակ, Իտալական թաղամաս 173

ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900248000029

ՀՎՀՀ 06801846

Տնօրեն՝

_____ / Ա. Ա.

Հավելված
2019թ. _____ -ին
կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում «Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա ժամկետը
1.	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում տարածքային մակարդակում՝ Սպիտակի տարածաշրջանում	Սպիտակի տարածաշրջանում գործող ուսումնական հաստատություններում կիրականացվի սովորողների, ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում	Կգնահատվեն ընդհանուր թվով 107 երեխաներ	30.12.2019
2.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում առաջին և դպրոցական և տարածքային մակարդակներում գնահատված երեխաներին	Սպիտակի տարածաշրջանում գործող ուսումնական հաստատություններում տարածքային կենտրոնի մասնագետների կողմից կտրամադրվի մանկավարժահոգեբանական աջակցություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ կստանա ընդհանուր թվով 282 անձ	30.12.2019

			անձանց, կիրականացվեն տնայցեր՝ տնային պայմաններում ուսուցմանն աջակցելու նպատակով: Կիրականացվի մոնիթորինգ/քարտեզագրում կենտրոնի կողմից սպասարկվող դպրոցներում և այլ հաստատություններում, որտեղ սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ	Մոնիթորինգը կիրականացվի ընդհանուր թվով՝ 28 դպրոցում և 8 նախադպրոցական հաստատությունում	
3.	Խորհրդատվությունների տրամադրում և խորհրդատվական այցեր	Խորհրդատվությունների տրամադրում սպասարկման տարածքի ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին, երեխաների ծնողներին	Խորհրդատվություններ կտրամադրվեն գնահատման և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, անհատական ուսուցման պլանի, երեխայի կրթության կազմակերպման ու սոցիալական ներգրավման վերաբերյալ	Կտրամադրվեն ընդհանուր թվով 67 խորհրդատվություններ և ուսուցողական դասընթացներ՝ 28 դպրոցում և 10 նախադպրոցական հաստատություններում, իսկ Կենտրոնում կտրամադրվի 27 խորհրդատվություն: Կենտրոնի կողմից իրականացրած խորհրդատվություններից կօգտվեն ընդհանուր թվով 377 անձինք:	30.12.2019
	Պահանջվող գումարը(դրամ)	70 265 600 ՀՀ դրամ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կրթության և գիտության նախարարություն	«Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Կառավարական 3 շենք	Ք. Սպիտակ, Իտալական 175
ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ «Սպիտակ» մ/ճ
Հ/Հ 900011011732	Հ/Հ 900248000029
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 06801846
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
_____ Ն.Հարությունյան	_____ Ա. Պողոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

*- Արդյունքային ցուցանիշները ներկայացված են աճողական կարգով